ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 288 - Ա

«ԿԱՐԻՏԱՍ-ԱՐԵԳԱԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 26,098,414 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյուղատնտեսական դասընթացների կենտրոնի կառուցում հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 05550519) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կանակա» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 06901369) հետ 2024 թվականի մարտի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կառուցապատման աշխատանքների իրականացում՝ 21,986,460 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շինմոլ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 055445441) հետ 2024 թվականի մարտի 5-ին կնքված՝ N CAS/24/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մատակարարում՝ 1,208,757 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՇԱՎ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 055445441) հետ 2024 թվականի մարտի 5-ին կնքված՝ N CAS/24/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սառնարանի մատակարարում և տեղադրում՝ 1,388,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Միթիլենդ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02821957) հետ 2024 թվականի մարտի 5-ին կնքված՝ N CAS/24/07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աթոռների պատրաստում և մատակարարում՝ 225,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Սոֆոն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00232725) հետ 2024 թվականի մարտի 5-ին կնքված՝ N CAS/24/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պրոյեկտորի մատակարարում և տեղադրում՝ 290,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գրանդ Թորնթոն» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00040569) հետ 2024 թվականի մարտի 5-ին կնքված՝ N AT-AU-039-24 CAS/24/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ